

Երջանիկ Ֆուլ

ԵՐՋԱՆԻԿԻ ԵՐԱԶԸ

Երևակայութիւն 1 զործ.

Գինն է 10 կղգ.

Թարգմ. կ. Ղազարբեկան

Շուօփ

Տպարան Մ. Բարաջանեանի

1912

84
Բ - 92

Հ
Հրապարակ Թուլի
ՀԱՐՄԱՆԻԿԻ ԵՐԱՋԸ
ՀՀԱԿԱՎՈՒԹԻՒՆ 1 գործ.

ՀԱՐՄԱՆԻԿԻ ԵՐԱՋԸ
ՀՀԱԿԱՎՈՒԹԻՒՆ 1 գործ.

12 MAY 2006
19 NOV 2010

Էհւդիմիք Թուլի

ԵՐԱՆԻԿԻ ԵՐԱՋԸ

Երևակայութիւն 1 գործ.

Թարգմ. կ. Ղազարբեկեան

ՀԱՅ. № 22338

Շուշի¹
Տպարան Մ. Բաբաջանեանի
1912

20 SEP 2013

7756/1

Նվիրում՝ եմ՝ թարգմանութիւնս
Տաղանդաւոր և սիրելի դերասան
ՅՈՎՀԱՆՆԵԼՍ ԶԱՂԻՖԵԱՆԻԻՆ

Կոստ. Գլազարքիկեան



40600-67

Ծուչ

ԵՐԶԱՆԻԿԻ ԵՐԱԶԸ

Երևակայութիւն 1 գործ. Լիւդվիգ Ֆուլդի
Դորժուղ անձինք.

Աղալբերտ, Վոլֆգանգ.

Առանձնասինեակ Աղալբերտի կալ-
ւածքում: Յետի պատում, քիչ դէպի
աջ—մուտքի դուռը: Զախ փոքրիկ ան-
կիւնում լայն ապակեայ դուռ՝ դէպի
պատշգամբը բացւող: Զախ պատի մէջ
տեղը բարձր լուսամուտ: Աջում, լու-
սամտի դիմաց—դուռ՝ ծանրաքաշ վա-
րագոյրներով: Պատերը կէս բարձրու-
թեամբ ծածկւած են փայտով, որից
բարձր—նկարներ, հրացան և որսոր-
դական յաղթանակի նշաններ: Հաս-
տատուն, յարմար կահաւորութիւն:
Զախում, լուսամտի մօտ՝ պրասեղան:
Նրա և նախաքեմի մէջ տեղը մի թախտ՝
բարձի տեղը դէպի պատը դրւած: Ա-
ռաստաղի մէջ տեղից կախւած է լապ-
տեր: Գրասեղանի վրայ լամպայ: Եր-
կուն էլ էլեքտրական:

Բոլոր ցուցմունքները հանդիսականի
կողմից: Գիշեր է: Վարագոյրը բար-

ձրանալիս բեմը, դատարգ է: Լուսնեակի լոյսը լայն շերտերով ընկնում է լուսամտի և ապակեայ դռան վրայ: Լուսում է մօտեցող կառքի խուլ ձայնը: Շուտով՝ դրանից յետոյ բացւում է մուտքի դռութ, որտեղից երկում է լուսնեակով լուսաւորւած այլին: Երեւում է Աղալքերոտը թեթև ճանապարհորդական վերաբերով և փափուկ զիմարկով: Նա առաջ է թողնում վօլֆագանգին՝ նոյնպէս վերաբերու և գըլշխարկ հազած: Երկուար ձեռքին ճանապարհորդական պայուսակներ: Լուսում է հեռացող կառքի ձայնը:

Աղալքերոտ... Ամբողջ տունը ընկըղմւած է խոր քնի մէջ:

Վօլֆզանգ.—Այլ կերպ լինել չէր կարող:

Աղ. — Ոչ ոք չի լսել մեր գալստեան մասին: Կառքը առանց աղմուկի սահում էր խոնաւ գիտնի վրայով: Երկի այստեղ նոյնպէս սաստիկ անձրկ է եկել:

Վ.—Դորա համար էլ գեղեցիկ և փառհեղ է դարձել գիշերը: Նայիր: Ինչպէս հապարտ է փայլում լուսինը: Նա իրեն աշխարհիս տէրն է գգում:

Աղ. — Այս, բայց վաղորդեան արշաւոյսը շուտ կամաչացնէ նրան:

Վ.—Լուսնի ամբողջ գեղեցկութիւնը արտայայտում է նրանով, որ առարկաները դրսից լուսաւորելով՝ տաիս է նրանց ներքին լուսատու ոյժ: (Հանում է ժամացոյցը): Մինչեւ անգամ ժամացոյցի շրջանակը հիմա տողաշարի է նմանում:

Աղ.—Ո՞ր ժամն է:

Վ.—Երրորդ:

Աղ.—Հանւիր և զգա քեղ ինչպէս տանդ:

Վ.—Լուսն եմ:

Աղ.—Քո սենեակը գտնուում է միւս կողմում, գլխաւոր մուտքի վերևը: Կառապանը քո իրերը կտանէ այնտեղ:

Վ.—Կնշանակէ մենք մտել ենք հասարակ մուտքնել:

Աղ.—Այդպէս մի բան, այս: Այդ դուռը տնից դէպի այգին դուրս ենելու միակ տեղն է: Նա բացւում է միայն ամառը:

Վ.—Եւ դու օգտւեցիր այդ բանից: Ներս մտար առւնդ, ինչպէս գնդ:

Աղ.—(Ծիծաղելով): Համարիա թէ: Բայց հիմա դուք երկուսդ կհամոզւեք, ես ուզում եմ ասել՝ դու և լուսնեակը՝

որ ևս կարիք չունիմ ամաչելու լոյսից: (Վառում է լապտերը):

Վ. —Ափսոս: (Շուրջը նայելով): Յարմար բան ես շինել քեզ համար:

Աղ. —Բոլորը, ինչ որ պահանջւում է կեանքում:

Վ. —Համաձայնուիր, որ ապրելու համար այդ շատ քիչ է: Թերեւս գողերը այստեղից օգտւելու բան ունենան:

Աղ. —Ինչ ես ուզում ասել դորանով:

Վ. —Կարծեմ գուռը բաց էր:

Աղ. —Այն, Այլ կերպ մենք այդ մուտքով չէին կարող անցնել: Ինչպէս տեսնում ես բանալին ներսեի կողմից է մտցրած:

Վ. —Միթէ այդ թեթևամտութիւն չէ:

Աղ. —Օ՛, հասարակ անհոգութիւն, որ զիւղացիների միակ առաւելութիւնն է քաղաքացիներիդ հանդէպ: Մենք ոչ չինչ չունինք վախենալու: Այս ճգնաւորական կացարանը գուցէ միայն պատահաբար մի որևէ հազւագիւտ թշուշուն մտնէ: Սակայն դու իրաւացի ես: Ծառաները չգիտեն իրենց պարտականութիւնները: Ես նրանց կպատւիրեմ ապագայում (Կողպում է դուռը) կողպել դուռը ահա այնպէս՝ շուր տալ կողպէքը երկու անգամ:

Վ. —Անհրևակայելի ճանապարհորդութիւն էր:

Աղ. —(Մօտենում է գրասեղանին): Յանկանում ես սիգարներ (ծխում է):

Վ. —Ռչ, շնորհակալ եմ:

Աղ. —Իսկ խմել:

Վ. —(Կանգնած ապակեայ դռան մօտ): Գուցէ միայն գիշերային օդը և ուրիշովինչ: Դու հակառակ չես:

Աղ. —Ծնորհ արա: Բոլորովին բաց: Այս պատշգամբը ես աւելացրել եմ անցեալ տարի: Յարմար է, չէ: Մենք միշտ այստեղ ենք նախաճաշում:

Վ. —(Բանալով ապակեայ դռների երկու մասերը): Ինչպէս լաւ է: Ինչպէս սիրութունք...: Կարծես կենդանութիւն տեղ պալասանի հոտ ես ներս չնշում:

Աղ. —Կարմիր ծաղիկներից է բուրում...

Վ. —Հեռւում սպիտակին են տալիս սարերը: Նայիր, ինչպէս են նրանք շողջողում ծառերի բների սիջից: Ես չգիտեմ ինչն է աւելի զրգութման ուժեղ բուրմունքը, թէ անըմբոնելի անգործութիւնը:

Աղ. —Սպանիր, Վաղը բերեկով դեռ միայն այդ չես տեսնիլ: Գնա դեռ այդու միջով դէպի բլուրը: Լճի դէպի այն

կողմը՝ յանկարծ կրացւի քո առջև մի
հմայիչ տեսաբան:

Վ.—Զէ՞ որ մինք անցանք մօտովը:
Ես տեսայ և լիճը, և բլուրը: Իսկա-
պէս հիանալի է այսահղ, քեզ մօտ:

Ադ.—(Ցոյց տալով գէպի աջ): Իսկ
այս դռան յետի...

Վ.—Ի՞նչ է այնտեղ:

Ադ.—Առփոփում է իսկ ամբողջ եր-
ջանկութիւնը:

Վ.—Միայն զինի թէ նա դարձնէ
մեր խօսակցութիւնից:

Ադ.—Օ՛, ոչ: Հանգիստ եղիր: Այս-
տեղ չի համում: աքաղաղի: կանչը և
գիւղական հկեղեցու զանգի դողանջիւ-
նը: Մարգիտը շատ ջզային է: Նրան
անհանգստութիւն է պատճառում ամե-
նափոքը աղմուկը և մինչեւ անգում խըշ-
շոցը կարող է նրան զարթեցնել: Որչ
պէսզի պահպանեմ նրա հանգստութիւ-
նը, ես ամբացրել իմ այս դռւը, կա-
խել եմ ծանրաքաշ վարագոյրներ, իսկ
լուսամուտները պինդ ծածկել եմ
փակոցով:

Վ.—Երեի չեմ ճանաչիլ նրան: Միայն
երեխայ ժամանակն եմ տեսել: Ցիշում
ես քո աներոջ տունը:

Ադ.—Իսկ քանի անգամ իմ գրել,

որ նա ցանկանում է տեսնել քեզ:

Վ.—Այն, իսկապէս, դու մի քանի
անգամ հրաւիրել ես ինձ:

Ադ.—Եւ չնայած դրան՝ դու երբէք
մեզ չես այցելել:

Վ.—Միշտ ոչ մի կերպ չի յաջողւել:

Ադ.—Առիթը հասել է: Այլապէս, Աս-
տուած գիտէ, թէ էլի Բըրք քեզ հետ
կհանդիպելինք միասին:

Վ.—Առիթը, կեանքում կամ ամեն
ինչ առիթ է կամ բոլորովին առիթ: Հը-
կայ:

Ադ.—Վերցրու, օրինակի համար, այս
տօնախմբութիւնը ես մինչև անգամ
չեմ էլ ենթադրել ներկայ լինել այնտեղ:

Վ.—Բայց, վերջ ի վերջոյ, այսուա-
մենայնիւ գնացել ես:

Ադ.—Մարգիտն է ինձ համոզել: Նա
պնդում է, որ ինձ համար անհրաժեշտ
է երբեմն որևէ բանով զանազանակեր-
պել կեանքս:

Վ.—Եւ դու, ի հարկէ, այդ բանից
ուրախացել ես:

Ադ.—Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում:
Միթէ երջանիկ մարդը պէսպէսութիւն
է փնտրում, կարիք է զգում նրա մէջ:

Վ.—Այդ դէպքում ինչն է վերջապէս
ստիպել քեզ գնալու:

Աղ.—Տարօրինակ քմահաճոյքն, որ աչ մի բանով չիմ կարող բացատրել ինձ:

Վ.—Իսկ ես հեշտ կրացատրեմ քեզ: Գլխաւոր ցանկութիւնս է եղել հանդիպել քեզ այնտեղ:

Աղ.—Ի՞նչո՞ւ այդ մասին ինձ ոչինչ չես գրել:

Վ.—Ես ընտրել եմ ամենառուղիղ ճանապարհ՝ ներշնչումը: Կամքի ուժով ես ներշնչել եմ քեզ իմ ցանկութիւնը հեռուին:

Աղ.—Ի՞նչպէս, դու շարունակում ես դեռ քո փորձերը: Հաւատո՞ւմ ես գաղտնի ոյժին:

Վ.—Ոչ գաղտնի, այլ բնական: Ցիշում ես մեր ուսանողական շրջանը: Այն ժամանակ ինձ յաճախ էր յաջողում ներշնչել քեզ յայտնի մտապատկեր կամ գործողութիւն:

Աղ.—Այն, շօշափելով կամ հայեացքով, բայց ոչ մի կերպ ներշնչելով հեռուից:

Վ.—Երևակայիր, որ այդ ինձ անհասկանալի է: Ես կարող եմ շատ օրինակներ և անհերքելի փաստեր բերել: Զէ որ ամեն սէկ կենդանի էակ ներկայացնում է իրենից էլեքտրական մեքնայ: Այդ պատճառով ամենաբնական

և հապարակ անթել հեռագիրը միացնում է մարդկանց հոգիները իրար հետ:

Աղ.—Կարեիլի է... Բայց կասիմ քեզ անկեղծօրէն, որ այդ բոլոր հարցերը ինձ անախորժ են, ինչպէս և այն բոլորը, ինչ որ առհասարակ մութ է, անհասկանալի և անընթանելի:

Վ.—Քո քոնկած յուզւած տրամադրութիւնը բացատրւում է միայն իմ հոգեկան հեռագրի հետևանքով: Ուստի մեր հանդիպաւումը ինձ խսի էլ չի զարդացնում:

Աղ.—Ընդհակառակը: Զէ որ գու, որքան յիշում եմ, երբէք չես սիրել հասարակական զւարճութիւնները:

Վ.—Ինձ ձեռի է այնտեղ ինչ որ հեղնական հետաքրքրափախրութիւն: Փէտք է տեսնել, մտածում եմ, ինչ է առաջացել այդ բոլոր «ընկերական» միութիւններից:

Աղ.—Մեշչաններ, որոնք ջղաձգարար աշխատում են պահպանել որևէ կերպ ակադեմիական կեանքի դատարկ անօթը!! Մինչդեռ նրանք մոռանում են, որ կեանքի հատիկը՝ երիտասարդութիւնը վաղուց արդէն կորել է:

Վ.—Ով գիտէ, եթէ չհրաւիրէիր ինձ

այնտեղ, ես չէի նայիլ այն բռնի զըւարձութեան վրայ:

Աղ.—Ահա հիմա վերջապէս, դու, մեզ հետ ես և մենք շուտ բաց չենք թողնիլ քեզ!

Վ.—Կասկածում եմ միայն՝ թէ արդեք իրաւունք եմ ունեցել...

Ա.—Ինչի՞ մէջ ես կասկածում:

Վ.—Չգիտեմ, իրաւացի են նզել, յորդորիլով քեզ թողնել այդ հասդէսը և շուտ գալ տուն: Ինձ բռնկել էր բնութեան, լուսոյ փայլի վայելքի ծարաւը:

Աղ.—Այն, իսկապէս աններելի սխալ է. դուքս քաշել ինձ ամրողովին թամբաքուի ծխով լի զինետնից և այդպիսով զրկել բաւականութիւնից անցուցանել երկրորդ գիշերը հիւրանոցի սպանիչ անկողնում...

Վ.—Մինչդեռ սկզբում դու այնուամենայնիւ տատանում էիր: Չպիճես! Ես այդ իսկոյն նկատեցի:

Աղ.—Գիտէս, Մարգիտը սպասում է ինձ միայն վաղը ճաշին: Նա առհասարակ չի սիրում ոչ մի սիւրպըիզ:

Վ.—Դու այդ կարող էիր ասել ինձ կատարելապէտ հանգիստ, անկեղծօրէն բոլորովին չճնշւելով:

Աղ.—Ա՛խ, ոչ Ես միայն սկզբումն էի տատանուում: Այնուհետև ինձ պատեց այնպիսի տանջող, անյաղթելի մի թախիծ... Համաձայնւելով քեզ հետ, ես միենոյն ժամանակ ենթարկվեցի և այդ թախծին: Երեսակայիր, որ ես բաժանել էի Մարգիտից տուաջին անգամ: Այդ հղել է մեր առաջին հրաժեշտաբը:

Վ.—Տղամարդը չպէտք է տխրէ! Միթէ այդ խելացի է նրա կողմից:

Աղ.—Դու չեն ճանաչում Մարգիտին! Չգիտես նրա գէպի ինձ ունեցած սիրոյ մասին: Այլապէս դու այգայս չէիր խօսիլ:

Վ.—Կնշանակէ դու նրան կվախեցնես քո գալուստով:

Աղ.—Հաւանական է: Եւ այնուամենայնիւ... Գնանք, ես ցոյց կտամ սենեկդ:

Վ.—Իզուրք: Մի աշխատիք: Միենոյն է ես հիմա չեմ քնելու: Չեմ ցանկանում ինձ ենթարկել լուսնի կախարդիչ գիղեցկութեան խաբուսիկ հմայքին: Գնա, բարեկամս, հանգստացիր և դադարիր մասծելուց իմ՝ գիշերային բուիս մասին: Իմ տրամադրութեան տակ է դարաւանդը, այգին: Նրանք

խոսամում են այնքան շատ բաւականութիւն պատճառել ինձ վաղը...

Ադ. — Ե՞ն, ինչպէս կուզես: Բարի գիշեր!

Վ. — Բարի գիշեր:

Ադ. — (Ուղղւելով դէպի աջ դուռը, կանգ է առնում): Սակայն չէ որ ես խակական եսասէր եմ: Չեմ յիշել մինչև անգամ, որ նրա դուռը փակ է: Իմ թխթիսկոցով կարող եմ յանկարծ զարթեցնել նրան, խանգարել նրա քաղցր քունը: Բայց թերեւ չհասկանալով իսկոյն ինչումն է գործը, Մարդկանց կարող է մտածել, որ մի որևէ դժբախտութիւն է պատահել: Այդպիսի մի անգուշութիւն կարող է նրա մէջ առաջնացնել ջղային ցնցում կամ նոյնիսկ մի ծանր հիւանդութիւն:

Վ. — Իսկապէս:

Ադ. — Բայց ոչ, ոչ! Նա պէտք է իմանայ վերադարձիս մասին միայն վաղը ցերեկով, երբ արդէն ինքը կը զարթնէ:

Վ. — Կնշանակէ դու տանդ ես և միենոյն ժամանակ առանց ապաստարանի:

Ադ. — Ոչինչ! Բնդամենը մի քանի ժամ: Ես կպառկեմ այստեղ, բազմոցի վրայ: (Հանգնում է էլեքտրական լապ-

տերը, միւնոյն ժամանակ վաստում է սեղանի վրայի լամպան, լուսաւորելով բազմոցը):

Վ. — Այստեղ քեզ համար անյարժար է: Հիմա ես ինձ յանդիմանում եմ դուրս համար:

Ադ. — Ինչով է վտառ ինձ համար: Հէքիաթի է նման: Նիրհել այստեղ, այսպէս մօտիկ Մարդկաթից: Ինչպէս հաւատարիմ սորուկ, ես պահպանում եմ տիրուհուս հանգստութիւնը: (Նստում է բազմոցի վրայ, ձգւելով դէպի յիշակը):

Վ. — (Յոյց տալով ապակեայ գուռը): Իսկ ես կպահպանիմ քո գուռը:

Ադ. — Մի հետանաբար: Մնա՞ քիչ ինձ հետո: Իմ քունը նոյնպէս դեռ չէ գալիս

Վ. — (Յետ զանալով): Միթէ օրօրել, է պէտք քեզ: Ինչպէս առաջները պատահում էր քննցնում էի, երբ մենք քեզ հետ բնակւում էինք իրար մօտ: Ցիշում ես:

Ադ. — Թեօդօրի հարկանութեամբ:

Վ. — Հիմա ինչպէս անել: Օրօրենք... Ֆլէյտայի նւագածութեամբ:

Ադ. — Միթէ ֆլէյտը քեզ մօտ է:

Վ. — Երբէք նրանից չեմ բաժանում:



Սակայն ես բոլորովին այլ կերպ էի ենթադրել...

Աղ. — Հիպնոսն վ:

Վ. — Յիշնում ես, քննութիւններից առաջ դու տանջւում էիր անքնութիւնից և ես քեզ քննեցնում էիր Դնում էի ձեռքը սկսիր և դու քնում էիր.

Աղ. — Այսուամենայնիւ ֆեօդօրի հիտ այդ նոյն բանը քեզ չէր յաջողւում անել:

Վ. — Դու ամենալաւ ոգիմիջնորդ ես: Թէև հիմա ես համարձակ կիրապով յանձըն կառնէի քննեցնել նրան:

Աղ. — Իսկ ես չէի ենթադրում, որ դու դեռ էլի շարունակում ես զրադւել այդ հարցով:

Վ. — Մինչև անգամ աւելի շատ, քան առաջ: Կանոնաւոր փորձերով ես զարգացրել իմ իմ բոլոր բնական ընդունակութիւնները կամքս կենտրոնացնելու համար: Եւ անկեղծօրէն կասեմ քեզ, որ այդ ուղղութեամբ հասել եմ հրաշալի հետևանքների: Մինչև անգամ ինձ հիացնող դիւտեր եմ արել:

Աղ. — Օրինակ:

Վ. — Ես կարող եմ ներշնչել մարդուն, որին քնացրել եմ, մոռանալ իր կեանքում տեղի ունեցած յայտնի դէպքը:

Այսպէս ասած, ջնջել յիշողութիւնից:

Աղ. — Զի կարող պատահել:

Վ. — Երբ նա զարթնէ, մի քանի յուշեր նրա յիշողութեան մէջ գոյութիւն չին ունենալ մինչ այն ժամանակ, երբ ինքս դարձեալ նրանց չեմ զարթեցնիլ:

Աղ. — Ճիշտ ինչպէս հէքիաթում:

Վ. — Ես կարող եմ, օրինակ, քնողին ներշնչել մինչև անգամ քուն:

Աղ. — Բայց ինչպէս:

Վ. — Կոանում եմ նրա: Վրայ և այն պատկերը, որ ես պարզ նկարում եմ երևակայութեանս մէջ, նա տեսնում է քնի մէջ:

Աղ. — Եւ այդ բոլորը դու բացատըրում ես...

Վ. — Միայն բացառապէս հոգեբանաշկան երևոյթով:

Աղ. — Կրկնում եմ այսուամենայնիւ, որ այդ ինձ համար հէքիաթ է թւում:

Վ. — Ցամենայն դէպս ներշնչմամբ մարդկանց շատ բարիք եմ արել: Մըտածիր, թէ քանի մարդիկ բաւականում են և կարող են կատարելապէս երջանիկ: Այնիւ միայն երջանկութեան պատրանքով: Պատրանք, որ ներշնչում ես նրանց զաժան իրականութեան փոխարէն:

Աղ. — (Մտազրադ): Ասա դու ինձ,
հաւատում ես մարդարէական երազնե-
րին:

Վ. — Եւ այո, և ոչ: Նայած նրան...

Աղ. — Այս ժամանակ, ինչով ես բա-
ցարում, օրինակ, որ իմ կեանքի ըո-
լոր կարեոր դէպքերից առաջ ես միշտ
երազնիր և առաջել, որովք յետոյ ի-
րականացել են:

Վ. — Ես ինքս գիտեմ այդպիսի շատ
դէպքերի մասին:

Աղ. — Հօրս մահը և Մարգիտի հետ
օրհասական հանդիպումս նոյնպէս նա-
խագուշակւած էին երազով:

Վ. — Այդպիսի երազնիրը պէտք է
դասել երկրորդ՝ բարձր կարդի երե-
ւոյթնիրի շարքը: Տարածութեան և
տեղի նշանակութիւնը մի ակնթար-
թում ոչնչանում է նեարդային համա-
կարգութեան ուժեղ բնախօսական լար-
ման պատճառով:

Աղ. — Թնի զուգադիպութիւնը իրա-
կանութեան հետ մի անգամ այնքան
կատարեալ էր, որ ես, օրինակ, ինա-
ցայ մինչև անգամ Մարգիտի վրայի
հագուստի արտասովոր ձեզ... նոյն
հագուստը, որի մէջ ես նրան տեսել
և երազիցս շատ առաջ! Այդ երկու

դէպքերը ոչ մի կերպ քեզ չի յաջող-
ւիլ ջնջել յիշողութիւնից:

Վ. — Ի՞նչո՞ւ: Գուցէ:

Աղ. — (Նայելով դէպի աջ): Ա՛խ, ինչ-
պիսի ձանձրոյթ! Դեռ չի լուսանում!

Վ. — Դու փեսացւի նման անհամբեր
ես!

Աղ. — Ոչ, ինչ անհամբերութիւն:
Իմ կարծիքով ոչինչ չարժէ ամուսնու-
թիւնը, երբ արդէն թառամել է փե-
սացւի և հարսնացւի զգացմանց թար-
մութիւնը! Բացի գրանից ինձ տիրա-
պետում է մի հետաքրքրութիւն: Ես
կցանկանայի իմանալ...

Վ. — Ի՞նչ:

Աղ. — Դուք կգայ արդեօք նա քեզ:

Վ. — Միթէ բաւական չէ ինձ համար
տեսնել քեզ կատարելապէս կերպարա-
նափոխւած երջանկութիւնից:

Աղ. — Երջանկութիւն! Ինչպէս այդ
ծամեմւած է! Լեղուն ստիպում է
մեզ միշտ անւանել ամենաարտասովոր
երկոյթնիրը մի որ և է անարդ խօս-
քով: Եւ նայիր՝ ոչնչով չբացատրող
խօսքով:

Վ. — Այս, բայց չէ որ դու արտա-
սանում ես ոչ միայն լեղուով: Նայիր
չորս կողմդ! Քանի համբ վկաներ կան

քո երջանկութեան! Տան կահաւորութիւնը, այգու բուրմունքը, կախարդիչ գիշերը՝ լի գգւանքով... վերջապէս քո ամբողջ կերպարանքը! Այդ բոլորը անդադար խօսում են երջանկութեան մռամբն: Երգում է սիրոյ դիւթական օրհներդը...

Աղ. — Չորս տարի է, զօլֆկանդ! Եւ այդ ժամանակամիջոցում ես չեմ յիշում մի ժամ, որ օրհնած չկինէի: Օրերը անցել են, ինչպէս վայրկեաններ! Այս, եթէ կարողանայի կանգնեցնել ժամանակը! Երկարացնել ժամերը!

Վ. — Եւ չնայած դորան, դու կնոջդ ենթարկում ես փորձերի:

Աղ. — Ինչպիսի՞:

Վ. — Դու դատապարտել ես նրա երիտասարդութիւնը սենակութեան: Վերցըել ես քեզ վրայ երեխայի համարձակութիւն՝ փոխարինել քեզնով ամբողջ աշխարհը:

Աղ. — Ամբողջ աշխարհը Որովհետեւ իմ մէջ է տեսնում նա միայն այդ աշխարհը: Մարգիտը պատկանում է այն բնաւորութիւններին, որոնք ոչ մի նըշանակութիւն չեն տալիս կեանքի յարմարութեան: Նրա մէջ թագնւած է երջանկութեան անսպառ տղբիւր: Ալ-

քանչիլի բնաւորութիւն! Կարծես ամութեղջրից սփռում է նա ինձ գգւանքի և սիրոյ առատութեամբ: Եւ այն բոլորը, ինչ մեր սիրոյն չէ վերաբերում, խորթ է նորան: Նա ապրում է միայն ինձնով և ինձ համար! Նա համամիտ է ինձ ամեն դէպքում, հասկանում է ամէն մի միտքս! Իր նըրազգացութեան չնորհիւ նա յաճախ գուշակում է միտքս: Բաւական է, տեսնեմ նրա հանգիստ, երջանիկ ժպիտը, որպէսզի հասկանամ, որ նա ոչ մի ցանկութիւն չունի: Եւ այդ ժպիտը աւելի շատ բան է անում, քան թէ բոլոր ամինաբռուն հաւաստիացումները: Մարգիտը մինչև անգամ կանանց հասարակութեան պահանջ չէ զգում: Նու տւատացնում է, որ իբր չկայ մի կին, որի հետ նա ամեն բանում միանար այնպէս, ինչպէս ինձ հետ:

Վ. — Իսկ դժւու Դու պատասխանում ես նրան նոյնպէս: Պարզ ասա ինձ, պահանջ չէ առաջանում քո մէջ խօսել և փոխանակիլ մտքերդ որևէ է տղամարդու հետ:

Աղ. — Ես ունիմ մի մօտ բարեկամ. դա ֆիօդօրն է:

Վ. — Ֆիօդօրը:

Աղ.—Արդէն մօտ մէկ տարի է: Միթէ նա այդ մասին քեզ ոչինչ չէ գրել: Եւ մինչև անգամ չի յայտնիլ, որ բնակում է այստեղ՝ մեր հարևանութեամբ: Նրա կալւածքը հեռու չէ այստեղից:

Վ.—Ռչ: Չիմ յիշում: Թէև այդ մասին գրել ես ինձ:

Աղ.—Նրա ագարակից մինչև մերը քսան բողէից աւելի ճանապարհ չէ:

Վ.—Ֆեօդօրը պսակւած է:

Աղ.—Բարեբաղդաբար, ոչ! Այլապէս ես չէի կարող այնպէս յաճախ օգտւել նրա ներկայութիւնից:

Վ.—Բայց միթէ դուք յաճախ էք տեսնեում:

Աղ.—Գրեթէ ամեն օր: Ես մեծ օգուտ եմ քաղում նրա այցելութիւնից: Զի՞ որ դու յիշում ես այդ մարդու բազմակողմանի կրթութիւնը, նրա մեծ խելքը, զգացութիւնը:

Վ.—Մօտ յարաբերութեանց մէջ նըրա հետ երբէք չենք եղել:

Աղ.—Երեսակայիր, որ ես էլ հիմա եմ միայն գնահատում նրան կատարելապէս: Իմ յարգանքը դէպի նա շարունակ աճում է: Եւ դու ինքդ կտեսնիս, թէ մրգան նա զարգացել է այն ժա-

մանկւանից յիտոյ:

Վ.—Իսկ կի՞նդ:

Աղ.—Մարդիմար:

Վ.—Ինչպէս է նա վերաբերում նըրան:

Աղ.—Ա՞խ, աւելի լաւ է մի հարցում: Դժբաղդաբար դա միակ փոքր բիծն է իմ հօրիզոնում: Մի ինչ որ պատճառով ֆեօդօրը նրան դուք չէ զայիս: Դիու նորերս նա ինձ ասաց, որ կատարելապէս գնահատելով նրա բազմաթիւ լաւ յատկութիւնները, այնուամենայնիւ երբէք ֆեօդօրին իր մօտ ծանօթների թւում չէր հաշիվ, եթէ նա իմ բարեկամս չինէր: Ահա իսկական սէր՝ ընդունակ ամեն տեսակ զոհողութիւնների!

Վ.—Եւ կի՞նդ արտայայտում է նրան բացարձակ իր բալոր ատելութիւնը:

Աղ.—Ռչ, թագնում է, որքան, ի հարկէ, հասրաւոր է: Մարդիմար շատ ուշադիր է դէպի նա: Երբ ես զբաղւած եմ լինում, մինչև անգամ նրա հիտ ձեւնարկում է ձիով հեռաւոր ուղենորութիւնների: Մի խօսքով, անում է բոլոր հարցաւորը, որպէսզի ինձ չվըշտացնէ: Բայց ես այնուամենայնիւ կասկածում եմ, որ ֆեօդօրը նկատէ

Նրա սառնութիւնը.

Վ. — Ժամանակը չափում է մարդկանց:

Աղ. — Հենց դրա վրայ էլ յոյս եմ գընում: Իմ կարծիքով երկու հրաշալի մարդիկ պէտք է անպատճառ միանան: Երանք պէտք է միջոց գտնեն՝ մօտենալու!

Վ. — Բայց անա ինդրեմ, ինչո՞ւ ֆեռորը չի դանցել քեզ հետ ինչոյցքին:

Աղ. — Մկրում նա ցանկանում էր: Մինչև անգամ մենք խօսք էինք տւել, որ ես գնամ նրա յետնից: Բայց հենց մինչև ճանապարհելը նա յայտնեց ինձ, որ հիւանդ է... Դու ինչ ասացիր:

Վ. — Ո՞վ, թու... Ռինչ...

Աղ. — Ինչ է նշանակում սովորութիւն ունինալ վաղ քնիլ: Ցողնածութիւն եմ գործման: Ցանկանում եմ քնիլ:

Վ. — Այդ դէպքում, բարի գիշեր! Ես կգնամ պատշգամբ:

Աղ. — (Մեկնւելով ննջանոցի վրայ): Նւագիր մի բան Փլէյտի վրայ: Բաց թող պատշգամբի դուռը: Թող գուրգուրեն ինձ քնքոյց հնչիւնները: Այդ պէս քաղցր կլինի նիրհելն ու զառանցելը...

Վ. — Հաճութեամբ... Բայց...

Աղ. — Շատ ցածր երգի ազդեցութեան տակ... Ո՞չ ոք, բացի ինձնից չի լսիլ... իսկ մանաւանդ Մարգիտը:

Վ. — Եթէ դու դորա մէջ համոզւած ես...

Աղ. — (Բնդհատելով): Այս, իհարկէ!

Վ. — (Հանկով Փլէյտը ճանապարհորդական պայտուակից): Ուրեմն, լսիր: Ես կնւագիմ լուսնի գիշերերգը:

Աղ. — Ցարմար է... (համարեա քնելով) Ինչպէս լաւէ տանը.. ինչպիսի.. երջանկութիւնն...

Վ. — Հանգցնել լամպան:

Աղ. — (Փակւած աչքերով): Արդեօք ինձնով է նա հիմա զառանցում:

Վ. — (Հանգցնելով լամպան): Երջանիկ! Սյստեղ իմ հնարքը անզօր է! Ի՞նչպիսի քունը զեղեցիկ կլինի քեզ համար իրականութիւնից: Ես չեմ կարող ներշնչել քեզ երջանիկ, դիւթական քուն: Դու իրջանիկ ես և իրականութիւնը քեզ համար զառանցանք: Թող երազումդ երևայ ինքը կեանքը!

Աղ. — (Հանդարտ) Կեանքը...

(Մենակը, ինչպէս և առաջ, լուսաւորւած է միայն լուսնեակի լոյսով: Վօլֆգանգը անցնում է ապակեայ դրոնով: Այնուհետև պատշգամբից լուսում

է Փլէյտի «աղաժիօ»-ն։ Աղալրերտի կանոնաւոր շնչառութիւնը ցոյց է տալիս, որ նա քնել է։ Խջնում է մի թափանցիկ ցանցիկ, ծածկելով բեմը։ Մի քիչ յետոյ աջ դուռը թեթև պղմուկով բացւում է։ Բարձրացնելով վարագոյրը, լուսնեակի վառ լուսաւորութեան մէջ, երեսում է ճանապարհի վրայ մէկ տղումարդ առանց գլխարկի, ծածկւած թիկնոցի մէջ։ Զերքում նա բռնած ունի մի քանի վարդ։ Յետ նայելով, ջերմաջերմ, կարծիս մնաս բարե ասելով, համրուրում է վարդերը և նրանցից մէկը ձգում յատակի վրայ։ Ուզդում է գէպի մուտքի դուռը և՝ գտնելով նըրան կողազած, լսում է ինչպէս երկու անգամ չըխկում է բանալին և նա հեռանում է։ Այն ժամանակ ննջանոցի վրայ քնածը անհանդիս շուռ ու մուռ է գալիս և հնձում, կարծիս մղձաւանջի ազգեցութեան տակ։ Ցանցած վարագոյրը բարձրանում է։ Ցատակի վըրայ ընկած վարդը տնհետանում է։

Աղ. — (Աւելի բարձր է հեծում և՝ սառառելով քնի հետ՝ վերջապէս յաղթում է նրան, Մոլորած նայում է շուրջը և նստում։ Չափազանց գրկուած, աղաղակում է)։ Վոլֆանգ! (վեր է ցատ-

կում և աւելի բարձր աղաղակում)։ Վոլֆանգ!!! (Փլէյտի հնչիւնները կը-տըրուում են)։

Վ. — (Մտնում է պատշդամբից)։ Դու չես կարողանում քնել։

Աղ. — (Բոնելով նրան)։ Վոլֆանգ!

Աղ. — Ի՞նչ է պատահել քեզ հետ։ Դու ամբողջովին դողում ես!

Աղ. — Լոյս!.. Կրակ!.. Լամպա!.. (Վագելով գէպի շտեպսելը, արագութեամբ վառում է լապտեզը)։

Վ. — Ասա, ի՞նչ է պատահել։

Աղ. — Ես... ինձ... երազումս... տեսայ... Վոլֆանգ... այստեղ եղել է... (Տինդային դրութեան մէջ աչքերով ինչ որ բան է փնտրում յատակի վրայ)։

Վ. — Ի՞նչ ես փնտրում։

Աղ. — Վարդ... „Marechal Niel“... իմ այգուց... Դա նա է եղել!... Ես տեսել եմ!... Ես ճանաչեցի նրան!.. Որտեղ է է վարդը... Որտեղ... Դու չես տես-նում որտեղ է նա...»

Վ. — Ո՞չ, ի՞նչ վարդ... Որտեղից նա պէտք է ընկած լինի այստեղ։

Աղ. — (Բոնում է նրա ձեռքից)։ Վոլֆ-գանգ, ես մի սարսափելի, զարհուրելի երազ տեսայ!»

Վ. — Եւ միմյա։

..

Աղ.—Այնպէս որոշակի, այնպէս կհնդանի, այնպէս շօշափելի կերպով...»

Վ.—Այս, բայց հիմա դու զարթնել ես...

Աղ.—Անձծքի գոհերն անգամ դժոխքում չեն կտրող տեսնել աւելի զարհութերելի երազ!

Վ.—Ինչպիսի՞ երազ է այդ:

Աղ.—Ես տեսայ... Ոչ, չհմ կարող!.. Ոյժ չունիմ!..

Վ.—Դէ՛, ասա, վերջապէս! Պատմելով աւելի շուտ կմոռանաս նրան.

Աղ.—Այստեղ էր... ես տեսայ,.. Բայց կանխաւ խոստացիր ինձ լուսթիւն պահպանի!..

Վ.—Խօսք հմ տալիս:

Աղ.—Ես տեսայ պարզ, որոշակի, ինչպէս հիմա քեզ եմ տեսնում... Ամբողջ այս սենեակը լուսավառւած լուսնեակի լոյսով...

Վ.—Արդ համկանալի է. քո վերջին տպաւորութիւնն է. քնից առաջ:

Աղ.—Ես զանազանում էի ամիսն մի առարկայ, բոլոր մանրամանութիւնները... Իմ հայեացքը, կարծես կախարդւած, յառած էր այս դուան (ցոյց տալով դէսի աջ):

Վ.—Նոյնպէս շատ հասկանալի է:

Կատարելապէս բնական!

Աղ.—Եւ յանկարծ...

Վ.—Յետնի:

Աղ.—Այս դուռը բացւեց և այնտեղ երևաց...

Վ.—Թո կի՞նը:

Աղ.—(Ճնշւելով): Ֆեօդօրի կերպարնքը:

Վ.—(Ապշած): Ա՛...

Աղ.—Երևակայիր, իմ ամենալաւ ընկեր մեօդօրը!

Վ.—Մեր խօսակցութեան ազգեցութիւնը և ուրիշ ոչինչ:

Աղ.—Բաժանւելով, նա բարեկեց նըրան այնպիսի՝ արտայտութեամբ...

Վօլֆանդ, ես տեսայ որոշակի նրա զէմքը՝ լուսաւորւած լուսնեակով! Ինչպիսի սարսափ!,.. Ֆեօդօրը ձեռքին պահած ունէր մի քանի վարդեր „Marechal Niel“: Ձիշտ նրանցից, որ ինքս եմ բուսցրել, Մարտիանի սիմելի ծաղկենեը:

Վ.—Դա դիմացի կարմիր ծաղկանոցի բուրմունքի տպաւորութիւնն է:

Աղ.—Նա համբուրում էր վարդերը և անսկատելի կերպով մէկը վայր ձկեց յատակի վրայ: Ահա հէնց այստեղ! (Նորից փնտրում է): Գուցէ ես սխալւել

հմ., Բայց, ոչ, ոչ!!

Վ. — Դու շարունակում ես զառանցել, Դիո մինչև հիմա չես զարթնել:

Աղ. — Թիօդօրը մօտեցաւ դռան և ես որոշակի լսեցի բանալիի ձայնը: Ես տեսայ... (Յանկարծ մտաքերի լուս), Գուցէ այդ բոլորը տեղի է ունեցել իրականութեան մէջ! Այդպէս կենդանի! Կարծես թէ բացայայտ է եղել:

Վ. — (մօտենալով մուտքի դռան): Ե՞կ այսաեղ:

Աղ. — (հետեւ լով նրան): Ինչժամն է գործը:

Վ. — Համոզւիր անձամբ, որ գուոք կողպւած է:

Աղ. — (փորձում է բանալ): Այս, կողպւած է: (Թեթևացած շունչ է առնում): Փառք Աստծոյ, կնշանակէ դա երազ է եղել!

Վ. — (գուրս բերելով նախաբեմը): Հանգստացիր, վերջապէս: Ժամանակ է, որ մոռանաս յիմար մղձաւանջը! Հիմա մենք պէտք է նրա վրայ միայն ուրախ, սրտանց ծիծաղենք:

Աղ. — Եւ իսկապէս ծիծաղելի է: Մարգիստը! Թիօդօր? Խնչպէս այդ բոլորը անմտութիւն է, այնպէս չէ: Հի-

մա ես ինքս ինձ ծիծաղելի եմ: Դու իրաւացի ես, Վոլֆգանգ: Զարթնելով ինձ պէտք էր միայն ծիծաղել, Բայց ով որ այդպիսի մի անհեթեթ երազ տեսնէ պարտաւոր է ծնկաչոք զոհութիւն յայտնի Արարջն անխուսափելի իրականութեան համար:

Վ. — Վերջապէս դու ուշըի եկար!

Աղ. — (գարձիալ անհանդատացած): Իսկ մինչ այդ ինչ էիր ասում:

Վ. — Ի՞նչի մասին:

Աղ. — Միթէ մոռացել ես: Վերջին տպաւրութեան ազդեցութիւնը երազի վրայ: Դու համաձայնւում էիր, ոք կը կնողութեան հնարաւորութիւնը...

Վ. — Այս, բայց դու այսպիս գործադրելի չէ:

Աղ. — Իսկապէս! Ես երբէք ինձ այդպիսի դրաւթեան մէջ չեմ գնիլ! Երբէք! Ել անխոհեմարար գեշերները չեմ անցոցիլ այսուեղ՝ այս սենեակում, յառնելով աչքերս նրա դռան... Բայց չէ որ այդ բոլորը այնպէս անհրաժեշտ կիսէր, եթէ որ...

Վ. — Ի՞նչ մոայլ մտքեր են!

Աղ. — (վճռաբար): Երբէք! Լուսարացը արդէն մօտ է! Շուտով կը ացւի օրը և այն ժամանակ...

Վ. — (Նայելով ժամացոյցին): Զորսից քառորդ պակաս է:

Աղ. — (ընկնելով ննջանոցի վրայ): Ներիր, բարեկամս, բայց ես ասրսափելի կերպով տանջւած եմ: Ցոգնել եմ նւազելու չափ:

Վ. — Ի հարկէ! Հասկանալի է!

Աղ. — Կրում եմ այնպիսի զգացմունք, կարծես բոլոր անդամներս փայտացնեն, իսկ արտևանունքներս՝ արճիճով մի իրենք իրենց փակւում են:

Վ. — Աւելի լուս կնշանակէ պինդ կը քննես: Ո՞չ մի երազ հիմա քեզ չի անհանգուացնիլ, Շարունակեմ օրօրոցի երգը: (Պատասխան չստանալով), Ա՞խ, դու արդէն քննել ես: (Մօտենում է շտեպսիլին և շուր տալիս նրան երկու անդամ: Նախ հանգչում է լապտերը և վառում լամպան, բայց յետոյ հանգչում է և վերջինս: Լուսնեակի լոյսը, ինչպէս և առաջ, Դուրս է գալիս ապակեայ դռնով):

Աղ. — (Պառկում է անշարժ, բաց աչքերով, կռութիւն: Խորին անդորրութիւն: Նորից կրկնում է նախկին երևոյթը, ինչպէս ցանցիկի յետենում: Բացւում է աջ դուռը և կանգնելով աղաղակում է արդէն զառանցել! (Վառում է լամպան, նայում չորս կողմը և տեսնում է Աղալբերտին): Դու այստեղ ես: (շտապում է նրա կողմը): Այդ ինչ խարէու-

դէմք: Նա համբուրում է վարդերը, ձգելով նրանցից մէկը յատակի վրայ: Մօտենում է ելքի դռան, չըխկացնում կողպէքը և հեռանում: Նախկին և ներկայ երևոյթների մէջ եղած տարրերութիւնը կայանում է նրանում, որ ցանցիկ չի իջում և վայր ընկած վարդը չի անհետանում, այլ մնում է յատակի վրայ: Բոլոր ժամանակը պառկում է անշարժ, ինչպէս քարացած, լայն բացւած աչքերով: Դատելով կարկամիչ ցնցուններին, նա պարզ տեսնում է այն բոլորը, ինչ կատարում է: Անօգուտ ջանք է թափում թօթափել մղաւանջը և ուշքի դալ: Յուսահատ ճիգերից յետոյ նրան յաջողուում է վերջապէս կատարելապէս տիրապետիլ ինք զինքը: Սաստիկ աղաղակում է: Ճոճում է և ընկնում յատակի վրայ, ննջանոցի ծայրին մօտ):

Վ. — (արագ ներս մտնելով): Ի՞նչ է պատահել դարձեալ: (Տեսնելով սինեակը դատարկ): Անյայտացմաւ Ո՞ւրի Սատանան տանչ!! Կարծես ես սկսում եմ արդէն զառանցել! (Վառում է լամպան, նայում չորս կողմը և տեսնում է Աղալբերտին): Դու այստեղ ես: (շտապում է նրա կողմը): Այդ ինչ խարէու-

թիւն է: Աղալը երտ!! Աղալը երտ!! Ի՞նչ
է պատահել քեզ հետ վերջապէս Ուշքի
եկ! Դու հիւմնդ հս: (բարձրացնում է,
պառկեցնում նրան այնպէս, որպէսզի
զլուխը ընկած լինի ննջանոցի վրայ:
Կուանում է նրայ վրայ):

Աղ.—(Բոնելով լանկարծ նրա կո-
կորդից): Ահա! Բոնեցիր! Անարդ դա-
ւաճան! Ելի պէտք է այսուհետև սուս
խօսես: Կամ ելի կրացասեմս!

Վ.—(Աղատւելով նրանից): Խելա-
գար! Խելքի եկ! Ո՞ւմ տեղն հս ընդու-
նում ինձ: Ես եմ, Վոլֆգանգը:

Աղ.—(Հսկնում է երեսի վրայ): Խե-
լագարութիւն... խելա-դար... Այո...
հս... հս... ցնորսում եմ...

Վ.—Ուշքի եկ վերջապէս: Դարձեալ
որս է զարնուրեկի երազ տեսամ:

Աղ.—(Խոպոտ ձայնով): Ո՞չ, ոչ, ոչ...
Բոլորը, ինչ որ առաջ տեսել էի երա-
զումս, հիմա պարզ տեսայ!

Վ.—Երեակայութիւն մէջ:

Աղ.—Հասկացիր, որ ես բոլորը, բո-
լորը տեսայ!.. Ես արտասովոր մարդ
եմ: Երազումս ուզեղս նկարում է ինձ
համար ապագայի հեռանկարներ: Եւ
ես կանխաւ գիտեմ բոլորը, ինչ որ
պէտք է պատահէ ինձ:

Վ.—Դու տեսամը:

Աղ.—Բոլորը, ասում եմ քեզ, Եւ կա-
տարելապէս այնպէս, ինչպէս պատմել
էի: Երկրորդ անգամ տեսայ, բայց ար-
դէն ակներեն!

Վ.—Կասկածում եմ: Այդպիսի գրո-
գուած գրութիւն մէջ չես կարող չո-
կել իրականութիւնը երազից:

Աղ.—Կրկնում եմ, հս չեմ քնել!..
Ես բոլորը, բոլորը տեսայ! Ակներմ!
Դուը բացւեց... Այնտեղից դուըս ե-
կաւ կենդանի, իսկական մեօգօրը:

Վ.—Ենթադրենք նոյն իսկ, որ դու
չես քնել: Այդ դէպօւմ ինչո՞ւ չես վեր
ցատկել ի բռնել նրան:

Աղ.—Ուզում էի... այս, ես ուզում
էի, բայց չկարողացայ: Ես պառկած
էի, ինչպէս կաշկանդւած, ինչպէս
մեխւած սիւնին... Կենդանի թաղւածը
ինձնից անօգնական դրութիւն մէջ
չէր կարող լինել! Ես չկարողացայ շարժ-
ւել տեղիցս: Աղաղակելու հնարաւո-
գութիւն չունէի նոյն իսկ:

Վ.—Իսկական մղձաւանջ և ուրիշ ո-
չինչ!

Աղ.—Երկնում եմ քեզ, վերջապէս,
Վոլֆգանգ, որ չեմ քնել: Հասկացիր,
որ իմ աշքերը լայն բացւած էին: Ես

տեսայ վարդերը նրա ձեռքին։ Նրանցից մէկը վայր է ընկել։

Վ. — (Շուռ է գալիս, նկատում յատակի վրայ վարդը, արագութեամբ վերցնում և թագցնում զրպանում): Եւ այսուամենայնիւ այդ երազ է եղել!

Աղ. — Ո՞չ, և հազար անգամ ոչ!!

Վ. — Ո՞չ ոք այստեղ չի եղել և ոչ ոք ոչինչ վայր չի ձգել։ Եթէ իսկապէս վարդը ընկած լինէր, այն ժամանակ, համաձայնւիր, որ նա այստեղ՝ յատակի վրայ կլինէր։ Մինչդեռ ոչ մի տեղ չկայ։ Փնտրիր։ Համոզւած եմ, որ չես գտնիլ։

Աղ. — Բայց նո պէտք է այստեղ լինի! Պէտք է լինի!

Վ. — Ի՞նչ մի աւելի հասարակ քան կարող է լինիլ։ Համոզւիր ինքու։

Աղ. (Դժւարութեամբ վեր է կենում): Անարդ թուլութիւն։ Օ՛... ես հիմա պէտք է զգոյշ լինիլ!

Վ. — Փնտրիր, փնտրիր!.. Սողա քիչ։ Եթէ որևէ է տեղ կտնես վարդը, կնշանակէ քո տեսողութիւնը իմից լաւ է։

Աղ. — (Ցանկարծ ինչ որ րան մտարերելով): Իսկ դժուը! (Ցատկում է դէպի մուտքի դուռը):

Վ. — (Վախիցած), Կանգնիր! Սպասիր! (Ցանկանում է նախազգուշացնել նրան):

Աղ. — (Լայն բանալով մուտքի դուռը): Բաց է! Նա բաց է! (Վայրենաբարձիծ զում է): Հա!.. Հա!.. Հիմա վերջապէս դու հաւատում ես ինձ։ Գող վկօլֆիքնդ, դող է եղել այստեղ!

Վ. — Բայց խնդրում եմ քեզ, ինչպէս ընկերոջ, ուշքի եկ!

Աղ. — Ես կարող եմ դեռ նրա յետեկց հասնել! (Ցանկանում է դուրս վաղել):

Վ. — (Պահելով նրան և տանելով նախարեմը): Լսիր, զու մոլորւում հստ հասարակ մի թիւրիմացութիւն է...

Այս դուռը...

Աղ. — Ինքն է բացւել։ Այսպէս չէ։ Բանալին ինքը երկու անգամ չըխկաց կողպէքում!

Վ. — Ո՞չ, ինքը չէ! Ես եմ բացել դուռը։

Աղ. — Դժււ։

Վ. — Այս, ես իմ խելքիս վչեց այգով անցնել դէպի բլուրը... և այնտեղից դէպի լիճը... վախենալով անհանգըստացնել քեզ, ես հանդարտ մօտեցայ դուան... և հազիւ կարողացել էի բանալ, երբ յանկարծ լսեցի քո ճիչը...

Աղ. — Մի աշխատիր! Իզուր է! Զէս որ
միևնոյն է, չիմ հաւատալու!

Վ. — Կնշանակի դու ինձ խարերայ ևս
համարում:

Աղ. — Երդւիր! Բայց հչ, հչ, հարկա-
ւոր չէ! Միթէ Մարդիտը ինձ չէ երդ-
ւել:

Վ. — Դու ուղղակի բամբասում ես եր-
կուսիս:

Աղ. — Ա՛խ, վօլֆգանգ! Եթէ միայն
կարողանայի հաւատալ! Եթէ միայն!
Ես կհամաձայնէի մուրացկան դառ-
նալ! Եւ ինձ հարուստ կհամարէի!
Կնանքիս կէսը կտայի և այնուամենայ-
նիւ ես ինձ անմահ կհամարէի!

Վ. — Ի՞նչն է խանգարում քեզ հուա-
տսլ:

Աղ. — Իմ աչքերը! Իմ աչքերը!

Վ. — Ի՞նչո՞ւ դու չես ենթադրում երա-
գի կրկնողութիւնը: Համաձայնէիր, որ
այստեղ անկարելի ոչինչ չկայ: Սմենէ
մէկին կարող է նոյն երազը երևա
անընդհատ!

Աղ. — Երազ կամ իրականութիւն?
Կե անք կամ մահ?!

Վ. — Ահա տեսնում ես: Դու ինքդ էլ
հիմա սկսում ես կասկածել...

Աղ. — Կասկածել! Օ՛, հչ! Միթէ չդի-

տես, որ ամեն մի կասկած հազար ան-
գամ տաժանելի է ամենասարսափելի
համոզմունքից: Եւ պէտք է վերջ տամ
այս կասկածին! Պէտք էլ... Եւ հիմա,
այս ժամին!!

Վ. — Լաւ, բայց ինչպէս:

Աղ. — Կհարցնեմ Մարդիտից: Կինամ
մօտը... (ուղղում է դէպի աջ դուռը):

Վ. — (Պահելով): Մնա:

Աղ. — Ես միայն կհարցնեմ նրանից.
Երանգ է եղել այդ:

Վ. — Ռչ, դու այդ չես անիլ: Գոնէ
ոչ այս ժամին: Մինչև որ չես հան-
գստանալ և ուշքի չես գալ!

Աղ. — Ես ցանկանում եմ յառել աչ-
քերս նրա վրայ: Տեսնեմ կդիմանայ
նա իմ հայեացքին: Ես կրոնեմ նրա
ձեռքերից և կտեսնեմ դողմւմ են նը-
րանք: Ես...

Վ. — Ինկ հետևմբքը: Մտածել ես
այդ մասին: Զէս որ Մարդիտը անմեղ է,
այդ ժամանակ նա երբէք քեզ չի նե-
րիւ վիրաւորանքներիդ համար! Եւ դու
ոչ մի բանով չես կարող քաւել! Շտա-
պողութիւնը միայն կկործանէ ամբողջ
երջանկութիւնդ:

Աղ. — Երջանկութիւն... Նա արդէն
փշուած է! Այսպէս կամ այնպէս...

Բայց նա ցրւել է մանր տաշեղների պէս. Ասա ինձ, միթէ կյաջողւի երբ և է ջնջել յիշողութիւնիցս երազիս պատկերը: Ո՞չ, հիմա բոլորը, բոլորը կործանւել է, բոլորը ոչնչացել, բոլորը փշրւել!!! Եւ իմ հաւատը, և՝ իմ հանգստութիւնը, անհոգութիւնը կորան ընդ միշտ! Այդ երկու ինձ ամենամօտ մարդկանց, որոնց այսպէս ջերմ սիրել եմ, որոնց ընտելացել եմ, նրանք փըշրիցին իմ ամբողջ կեանքը: Միթէ ես կարող եմ նայել նրանց վրայ նախկին հայեացքով: Ամեն մի հայեացքս հետեւյու է նրանց: Նրանց ամեն մի խօսքի մէջ նկատելու եմ դաւաճանութիւն, մատնութիւն: Դէմքի ամենաչընչին փոփոխութեան մէջ տեսնելու եմ խոստովանութիւն: Ասա, միթէ իմ ոխի թոյնը չի թունաւորիլ ամեն ժամ, ամեն բովէ մեր միակիցութիւնը:

Վ.—Իսկ եթէ քո բոլոր ենթադրութիւնները և ոփը անհիմն են? Այն ժամանակ ինչպէս:

Ադ.—(Խփելով իր ճակատին), Ա՛խ, միթէ ես կոյը էի: Ինչո՞ւ նա համոզում էր ինձ ներկայ լինել խնջոյքին: Ինչո՞ւ Ֆհօդօրի չնկաւ ինձ հետ: Ինչո՞ւ համար են այդ հեռաւոր զբօսանքները միասին:

Մարգիտը կարող էր հեշտութեամբ աղատւել նրա հասարակութիւնից, եթէ իրաւ նա նրա համար անհաճոյ է! Պարզ է, որ այդ բոլորին նա դիմել է իմ մէջ հաւատ առաջացնելու, կասկած փարատելու նպատակով: Սակայն այդ բոլորը հին միջոցներ են! Հիմա ինձ համար բոլորը, բոլորը պարզ է!

Վ.—Կրկնում եմ, որ հիմա դու չես կարող անաշառ դատել:

Ադ.—Այն ժամանակ, երբ խօսում էի քեզ հետ, երբ նւաճել էր ինձ վիշտը, տանջալից ցանկութիւնը տեսնել նըրան... Օ՛ (սեղմելով բոռւնցքները): Օ՛, թանկ կվճարէ նա ինձ!!!

Վ.—(Պահելով նրան): Ադալբերտ!

Ադ.—Թող ինձ, թող! Հիմա կամ երբէք!! Ես պէտք է բոլորը պարզեմ: Նախ ներա մօտ, իսկ յետոյ նրա մօտ!

Վ.—Ո՞չ մի քայլ!!! Նախ քան գործելող, պէտք է հանգստանաս:

Ադ.—(Հեղնօրէն): Հանգստանամլ... Հիմմ...

Վ.—Այս, ես այդպէս եմ կամենում: Դու կենթարկես ինձ, ինչպէս երեխայ: (Հրամայողաբար): Փակիր աչքերդ!! Ետրցրու ինքնագիտակցութիւնդ! Զգա թուլութիւն նաղելու չափ!!

Աղ. — (Փակւած աչքերով, շնչում է):
Մահու չափ յոգնել եմ...

Վ. — (Թաշում է նրան դէպի ննջանոցը. առանց որևէ ընդդիմութեան, խնամքով պառկեցնում է): Պառկիր... Հանգստացիր... Քո մէջ այլ ևս կամք չկայ!... Միտք չկայ!... Բոլորը անհետացել է... Բոլորը քայլքայել է... հալւել... (Կանգնում է շատ մօտ, գլխավերեւ: Դնում է ձեռքը ճակատին: Խօսում է դանդաղ և պարզ: Դէմքը արտայայտում է կամքի ուժեղ լարւածութիւն): Պինդ քնիր, չարթնանալու աստիճան... պինդ... չարթնանալու!! Դու պէտք է մոռանաս այս գիշերւայ բոլոր դէպքերը!! Լսմաւ ես! Ես հրամայում եմ քեզ!! Երբ զարթնես, զգացածդ նկարները պէտք է անհետանան քո յիշողութիւնից ընդ միշտ!!! Ես այդպէս եմ եամենում!!! Քո երազը ես եմ կարդաւորում!! Վարդիրը անուշահոտութիւն են բուրում... Բլրի ստորոտի լճում ցոլանում է արծաթափայլ լուսինը... Երկրիս վրայ ամենագեղեցիկ անկիւնը քեզ է պատկանում... Քեզ մօտ են Մարգիտը և Ֆիօդօրը... Դու սիրում ես նրանց!! Նրանք քեզ են սիրում!! Զառանցիր,

բարեկամս! Թող երազումդ երևայ, որ դու երջանիկ ես...

Աղ. — (Նրա երեսի վրայով անցնում է երջանիկ ժակիտ. քնի մէջ): Մարգիտ...



Երևան
Առաջին
1912,
Հայոց պատմութեան

ԵՏՈՅ

Ա.

«Ազգային գրադարան



NL0317318

7756/1

| 12-38